



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/27373-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Լեզվի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի (Պ-328-01.07.2022-ԳԿ-011/0) փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 949- Ա որոշումը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ազնեսա Առաքելյան

Հեռ. 010515403 077787821

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-328-01.07.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է՝

1. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ներկայացված հիմանավորման համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալիս աշխատանքային ժամին, օրինակ՝ ժամը 17:00-ին, ինչը հնարավորություն չի տալիս հաշմանդամություն ունեցող անձանց իրենց համար հասկանալի և մատչելի կերպով ստանալու տեղեկատվություն հեռուստաեթերից: Ինչ վերաբերում է մանկական հաղորդումներին, ապա օրենքը չի առանձնացնում դրանք մուլտֆիլմերից. արդյունքում հեռարձակողները մուլտֆիլմերը ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն ստանալու, կրթական և զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ վերջիններիս համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաև անհնարին, քանի որ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեծ մասը նախադպրոցական տարիքի է, հետևաբար կարդալ չգիտի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալու լիազոր մարմնի սահմանած ժամերին համապատասխան, ներկայացված

նախագծով հիմնավորմամբ բարձրացված խնդիրը չի լուծվում: Ըստ այդմ, օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

2.Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորումներն անհրաժեշտ է միավորել մեկ կետով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ կետը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչպես նաև «Ժեստերի լեզվով» բառերից առաջ լրացնել «հայերեն» բառը, բացի այդ անհրաժեշտ է վերանայել 2-րդ կետով շարադրվող դրույթը, քանի որ վերջինիս միտքը ավարտուն և ամբողջական չէ: Այս համատեքստում Նախագծի վերնագիրը խմբագրելու անհրաժեշտություն կառաջանա, մասնավորապես՝ «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը հարկավոր է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:*

Սույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի համանման կարգավորումներին:

3.Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «վերաշարադրել» բառն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով:*

Սույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի համանման կարգավորումներին:

4.Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված «և/կամ» բառը առաջարկում ենք փոխարինել «և» կամ «կամ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ *եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:*

5.Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով լրացվող բ. ենթակետում հստակեցման կարիք ունի «պաշտոնական միջոցառում» և «պետական տոն» հասկացությունները:

Վերջինս անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Առաջարկվում է նույն կետով լրացվող գ. կետում բացել «ԱԺ» հապավումը: Միաժամանակ առաջարկում ենք «արտակարգ» բառից հետո լրացնել «և ռազմական» բառերը:

6.Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «2-րդ մասի գ. և դ. կետերը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասի 2-րդ կետով լրացվող 4-րդ կետի գ. և դ. ենթակետերը» բառերով:

7.Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումներն առաջարկում ենք նախատեսել եզրափակիչ դրույթների տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը, որի համաձայն՝ ***նորմատիվ իրավական ակտը ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում է նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները:***

««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1.Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասը *լրացնել հետևյալ նախադասությամբ.*՝ «Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով **կարող են ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:**» :

Այս առումով, անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ ընթացակարգով, որ դեպքերում և ինչ պայմաններով կարող է Ազգային ժողովի նիստերի և խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումն ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:

Առանց ընթացակարգերի և դեպքերի խորհրդարանական լսումների համար առցանց հեռարձակումը ժեստերի լեզվի թարգմանությամբ նախատեսելը հայեցողական բնույթ է կրում, ինչը խնդրահարույց է:

2.Նախագծի 1-ին հոդվածից հանել «N» տառը, միաժամանակ «լրացնել հետևյալ նախադասությամբ» բառերը փոխարինել «լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ» բառերով.

3.Նախագիծը լրացնել նոր՝ 2-րդ հոդվածով, ուժի մեջ մտնելու վերաբերյալ համապատասխան դրույթով.

4.Անհրաժեշտ է Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ *սահմանադրական օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են սահմանադրական օրենքի վերնագիրը, սահմանադրական օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «սահմանադրական օրենք» բառը:*

««Լեզվի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն. *«Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»*

Սույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասին:

2. Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը լրացնել նոր մասով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով» բառերով:

3.Նախագծի 2-րդ հոդվածում «10-րդ օրը» բառերը փոխարինել «տասներորդ օրը» բառերով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 949 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» և «Լեզվի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-328- 01.07.2022-ԳԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-328-01.07.2022-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի N ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի

- 4-րդ մասը վերաշարադրել հետևյալ շարադասությամբ՝. «4. Հեռարձակողները, որոնք արտադրում են նաեւ մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդումներ, ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ, լրատվական հաղորդում եւ ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ եւ (կամ) ենթագրով:»:
- 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ շարադասությամբ՝. «Ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջները եւ հեռարձակման ժամերը:»:

Հոդված 2.

Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասը վերաշարադրել հետևյալ նախադասությամբ.
«Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:»:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի

- 6-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետը շարադրել հետևյալ շարադասությամբ՝. «գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական, եւ սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը:»:
- 6-րդ մասը լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ՝. «4) ապահովել հայերեն ենթագրերով եւ (կամ) ժեստերի լեզվի թարգմանությամբ՝

ա. շաբաթվա ընթացքում առնվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության պետական տոներին եւ հիշատակի օրերին կազմակերպվող պաշտոնական միջոցառումների ուղիղ հեռարձակումները,

գ. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահի, Հայաստանի Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները եւ նախապես ծրագրված հարցազրույցները,

դ. արտակարգ դրության ժամանակ եթեր հեռարձակվող հատուկ թողարկումները,

ե. սոցիալական գովազդը»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գ եւ դ կետերը ուժի մեջ են մտնում 2022 թվականի դեկտեմբերի 1-ին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ կից օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ Սահմանադրությունից եւ միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

Հասարակական կյանքում անձի լիարժեք ներառման համար, ի թիվս այլնի, առաջնային նշանակություն ունի սեփական իրավունքների եւ ազատությունների վերաբերյալ իրազեկման ապահովումը, որը նպաստում է ինքնուրույն որոշումների կայացմանն ու այդ իրավունքներից եւ ազատություններից անարգել օգտվելու հնարավորությանը: Որպես նշվածի իրացման հնարավորություն՝ հիմնարար նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության ապահովումը, ինչի բացակայությունն առկա օրենսդրական եւ իրավակիրառ պրակտիկայում մի շարք խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես լսողության խնդիր ունեցող անձանց համար:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որի 21-րդ հոդվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաեւ փնտրել, ստանալ եւ տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով եւ հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Ընդ որում, նշված իրավունքների իրականացումն անհրաժեշտ է ապահովել առանց հավելյալ ծախսերի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Նշվածի առնչությամբ կոնվենցիոն կարգավորումներից բացի ՀՀ ներպետական օրենսդրությունը եւս որոշակի կարգավորումներ է նախատեսում: Մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը

սահմանում է, որ պետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման եւ թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց, ինչպես նաեւ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը: Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանվում են օրվա ընթացքում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ եւ (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) տեսալսողական հաղորդումների նվազագույն քանակները եւ պահանջները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Հեռարձակողները, որոնք արտադրում են նաեւ մանկական եւ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով»:

Արդյունքում՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալիս աշխատանքային ժամին, օրինակ՝ ժամը 17:00-ին, ինչը հնարավորություն չի ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց իրենց համար հասկանալի եւ մատչելի կերպով ստանալու տեղեկատվություն հեռուստատեսերից: Ինչ վերաբերում է մանկական հաղորդումներին, ապա օրենքը չի առանձնացնում դրանք մուլտֆիլմերից. արդյունքում հեռարձակողները մուլտֆիլմերը ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն ստանալու, կրթական եւ զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ վերջիններիս համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաեւ անհնարին, քանի որ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեծ մասը նախադպրոցական տարիքի է, հետեւաբար կարդալ չգիտի:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները զրկված են պաշտոնական ուղիղ եթերներից եւ հարցազրույցներից տեղեկություն ստանալու հնարավորությունից, մասնավորապես ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ նախագահի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները չեն ուղեկցվում ժեստերի լեզվի թարգմանությամբ՝ նույնիսկ Հանրային հեռուստաընկերության եթերում: Լսողության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրացման համար չկան պայմաններ Արտակարգ դրության ժամանակ արագ եւ մատչելի տեղեկություն ստանալու համար:

Հեռուստատեսերով հեռարձակվող սոցիալական գովազդը ժեստերի լեզվով կամ ենթագրերով հեռարձակվում է միայն պատվիրատուի նախաձեռնությամբ, ինչը կրկին սահմանափակում է տեղեկատվության մատչելիությունը:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները չունի կրթական, առողջապահական, մշակութային, ժամանցային բնույթի հեռուստածրագրերին հաղորդակից լինելու, այդ թվում ֆիլմեր դիտելու հնարավորություն:

Խնդրահարույց է նաեւ ժեստերի լեզվով հեռարձակման կազմակերպումը, քանի որ թարգմանության ընթացքում չեն պահպանվում միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափանիշները եւ պահանջները:

Բացի վերը նշվածից, գործող կարգավորումներով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն անդրադառնում է խտրականության արգելքին, այնուամենայնիվ տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը չի սահմանում տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականության արգելք:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուրդոթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով՝ ժեստերի լեզվի հասկացությունը որեւէ օրենքով սահմանված չէ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում եւ կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

- հստակեցնել հայերեն ժեստերի լեզվով եւ ենթագրերով հեռարձակվող հաղորդումների տեսակները եւ ավելացնել դրանց ծավալը,
- հստակեցնել կարգավորող պետական մարմնի լիազորությունները ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջների եւ հեռարձակման ժամերի սահմանման վերաբերյալ
- սահմանել տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելք նաեւ տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն տարածելու, կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն պարունակելու դեպքում,
- հայերեն ենթագրերով եւ ժեստերի լեզվի թարգմանությամբ լրացուցիչ եւ պարտադիր հաղորդումների ցանկ սահմանել Հանրային հեռարձակողների համար, ներառելով կրթական, առողջապահական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումները, պաշտոնական տեղեկատվությունը, արտակարգ դրության ժամանակ հատուկ թողարկումները եւ սոցիալական գովազդը,
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքում սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը:

3. Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ ընդլայնելու հայերեն ժեստերի լեզվով եւ (կամ) ենթագրերով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների ծավալը, լրացուցիչ պարտավորություններ կսահմանվեն Հանրային հեռարձակողների համար, օրենքով կսահմանվի «Ժեստերի լեզու» հասկացությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.՝ «Ազգային ժողովի նիստերի եւ խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքով կարող են ուղեկցվել հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ
կատարելու եւ կից օրենքների նախագծերի վերաբերյալ**

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ Սահմանադրությունից եւ միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

Հասարակական կյանքում անձի լիարժեք ներառման համար, ի թիվս այլնի, առաջնային նշանակություն ունի սեփական իրավունքների եւ ազատությունների վերաբերյալ իրազեկման ապահովումը, որը նպաստում է ինքնուրույն որոշումների կայացմանն ու այդ իրավունքներից եւ ազատություններից անարգել օգտվելու հնարավորությանը: Որպես նշվածի իրացման հնարավորություն՝ հիմնարար նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության ապահովումը, ինչի բացակայությունն առկա օրենսդրական եւ իրավակիրառ պրակտիկայում մի շարք խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես լսողության խնդիր ունեցող անձանց համար:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որի 21-րդ հոդվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաեւ փնտրել, ստանալ եւ տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով եւ հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Ընդ որում, նշված իրավունքների իրականացումն անհրաժեշտ է ապահովել առանց հավելյալ ծախսերի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Նշվածի առնչությամբ կոնվենցիոն կարգավորումներից բացի ՀՀ ներպետական օրենսդրությունը եւս որոշակի կարգավորումներ է նախատեսում: Մասնավորապես՝

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման եւ թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց, ինչպես նաեւ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը: Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանվում են օրվա ընթացքում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ եւ (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) տեսալսողական հաղորդումների նվազագույն քանակները եւ պահանջները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Հեռարձակողները, որոնք արտադրում են նաեւ մանկական եւ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով»:

Արդյունքում՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալիս աշխատանքային ժամին, օրինակ՝ ժամը 17:00-ին, ինչը հնարավորություն չի ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց իրենց համար հասկանալի եւ մատչելի կերպով ստանալու տեղեկատվություն հեռուստատեսերից: Ինչ վերաբերում է մանկական հաղորդումներին, ապա օրենքը չի առանձնացնում դրանք մուլտֆիլմերից. արդյունքում հեռարձակողները մուլտֆիլմերը ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն ստանալու, կրթական եւ զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ վերջիններիս համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաեւ անհնարին, քանի որ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեծ մասը նախադպրոցական տարիքի է, հետեւաբար կարդալ չգիտի:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները զրկված են պաշտոնական ուղիղ եթերներից եւ հարցազրույցներից տեղեկություն ստանալու հնարավորությունից, մասնավորապես ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ նախագահի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները չեն ուղեկցվում ժեստերի լեզվի թարգմանությամբ՝ նույնիսկ Հանրային հեռուստաընկերության եթերում: Լսողության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրացման համար չկան պայմաններ Արտակարգ դրության ժամանակ արագ եւ մատչելի տեղեկություն ստանալու համար:

Հեռուստատեսերով հեռարձակվող սոցիալական գովազդը ժեստերի լեզվով կամ ենթագրերով հեռարձակվում է միայն պատվիրատուի նախաձեռնությամբ, ինչը կրկին սահմանափակում է տեղեկատվության մատչելիությունը:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները չունի կրթական, առողջապահական, մշակութային, ժամանցային բնույթի հեռուստածրագրերին հաղորդակից լինելու, այդ թվում ֆիլմեր դիտելու հնարավորություն:

Խնդրահարույց է նաեւ ժեստերի լեզվով հեռարձակման կազմակերպումը, քանի որ թարգմանության ընթացքում չեն պահպանվում միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափանիշները եւ պահանջները:

Բացի վերը նշվածից, գործող կարգավորումներով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն անդրադառնում է խտրականության արգելքին, այնուամենայնիվ տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը չի սահմանում տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականության արգելք:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուրդոթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով՝ ժեստերի լեզվի հասկացությունը որեւէ օրենքով սահմանված չէ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում եւ կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

- հստակեցնել հայերեն ժեստերի լեզվով եւ ենթագրերով հեռարձակվող հաղորդումների տեսակները եւ ավելացնել դրանց ծավալը,
- հստակեցնել կարգավորող պետական մարմնի լիազորությունները ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջների եւ հեռարձակման ժամերի սահմանման վերաբերյալ
- սահմանել տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելք նաեւ տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն տարածելու, կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն պարունակելու դեպքում,
- հայերեն ենթագրերով եւ ժեստերի լեզվի թարգմանությամբ լրացուցիչ եւ պարտադիր հաղորդումների ցանկ սահմանել Հանրային հեռարձակողների համար, ներառելով կրթական, առողջապահական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումները, պաշտոնական տեղեկատվությունը, արտակարգ դրության ժամանակ հատուկ թողարկումները եւ սոցիալական գովազդը,
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքում սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը:

3. Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ ընդլայնելու հայերեն ժեստերի լեզվով եւ (կամ) ենթագրերով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների ծավալը, լրացուցիչ պարտավորություններ կսահմանվեն Հանրային հեռարձակողների համար, օրենքով կսահմանվի «Ժեստերի լեզու» հասկացությունը:

Պ-328²-01.07.2022-ԳԿ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1.

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի մարտի 30-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.1.-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ.՝ «Ժեստերի լեզու՝ լեզվական ինքնատիպ համակարգ, որը դրսևորվում է ձեռքերի իմաստավորված շարժումներով՝ դիմախաղի, շրթունքերի շարժումների եւ մարմնի դիրքի համակցմամբ:»:

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Տեսալսողական մեդիայի» մասին օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ կից օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է լսողության խնդիրներ ունեցող անձանց մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացման իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ, բխում է ՀՀ Սահմանադրությունից եւ միջազգային պայմանագրերով ստանձնած երկրի պարտավորություններից:

Հասարակական կյանքում անձի լիարժեք ներառման համար, ի թիվս այլնի, առաջնային նշանակություն ունի սեփական իրավունքների եւ ազատությունների վերաբերյալ իրազեկման ապահովումը, որը նպաստում է ինքնուրույն որոշումների կայացմանն ու այդ իրավունքներից եւ ազատություններից անարգել օգտվելու հնարավորությանը: Որպես նշվածի իրացման հնարավորություն՝ հիմնարար նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության ապահովումը, ինչի բացակայությունն առկա օրենսդրական եւ իրավակիրառ պրակտիկայում մի շարք խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես լսողության խնդիր ունեցող անձանց համար:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, որի 21-րդ

հողվածով ամրագրվում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել իրենց խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ եւ տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով եւ հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Ընդ որում, նշված իրավունքների իրականացումն անհրաժեշտ է ապահովել առանց հավելյալ ծախսերի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Նշվածի առնչությամբ կոնվենցիոն կարգավորումներից բացի ՀՀ ներպետական օրենսդրությունը եւս որոշակի կարգավորումներ է նախատեսում: Մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման եւ թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց, ինչպես նաև տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկությունների ստացման մատչելիությունը: Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն ստանալու մատչելիությունն ապահովելու համար «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանվում են օրվա ընթացքում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ եւ (կամ) հայերեն բաց կամ փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) տեսալսողական հաղորդումների նվազագույն քանակները եւ պահանջները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև մանկական եւ (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով»:

Արդյունքում՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ ժեստերի լեզվով հեռարձակվող լրատվական թողարկումները եթեր են դուրս գալիս աշխատանքային ժամին, օրինակ՝ ժամը 17:00-ին, ինչը հնարավորություն չի ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց իրենց համար հասկանալի եւ մատչելի կերպով ստանալու տեղեկատվություն հեռուստատեսներից: Ինչ վերաբերում է մանկական հաղորդումներին, ապա օրենքը չի առանձնացնում դրանք մուլտֆիլմերից. արդյունքում հեռարձակողները մուլտֆիլմերը ենթագրերով են եթեր հեռարձակում, ինչը չի ապահովում երեխաների տեղեկություն ստանալու, կրթական եւ զարգացման ծրագրերին հաղորդակից լինելու իրավունքը, քանի որ վերջիններիս համար ոչ միայն դժվար է ընթերցել ենթագրերը, այլ նաև անհնարին, քանի որ մուլտֆիլմեր դիտող երեխաների մեծ մասը նախադպրոցական տարիքի է, հետեւաբար կարդալ չգիտի:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները զրկված են պաշտոնական ուղիղ եթերներից եւ հարցազրույցներից տեղեկություն ստանալու հնարավորությունից, մասնավորապես ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ նախագահի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները չեն ուղեկցվում ժեստերի լեզվի թարգմանությամբ՝ նույնիսկ Հանրային հեռուստաընկերության եթերում: Լսողության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրացման համար չկան պայմաններ Արտակարգ դրության ժամանակ արագ եւ մատչելի տեղեկություն ստանալու համար:

Հեռուստաերթերով հեռարձակվող սոցիալական գովազդը ժեստերի լեզվով կամ ենթագրերով հեռարձակվում է միայն պատվիրատուի նախաձեռնությամբ, ինչը կրկին սահմանափակում է տեղեկատվության մատչելիությունը:

Լսողության խնդիր ունեցող հեռուստադիտողները չունի կրթական, առողջապահական, մշակութային, ժամանցային բնույթի հեռուստածրագրերին հաղորդակից լինելու, այդ թվում ֆիլմեր դիտելու հնարավորություն:

Խնդրահարույց է նաեւ ժեստերի լեզվով հեռարձակման կազմակերպումը, քանի որ թարգմանության ընթացքում չեն պահպանվում միջազգայնորեն ընդունված տեխնիկական չափանիշները եւ պահանջները:

Բացի վերը նշվածից, գործող կարգավորումներով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքն անդրադառնում է խտրականության արգելքին, այնուամենայնիվ տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը չի սահմանում տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականության արգելք:

2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածով սահմանվում էր «սուբյոթթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը ձեռք-լեզվով»: Սակայն 2020 թվականի հուլիսի 16-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը չի ներառում համարժեք սահմանում: Այսպիսով՝ ժեստերի լեզվի հասկացությունը որեւէ օրենքով սահմանված չէ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում եւ կից օրենքների փաթեթում, մասնավորապես՝

- հստակեցնել հայերեն ժեստերի լեզվով եւ ենթագրերով հեռարձակվող հաղորդումների տեսակները եւ ավելացնել դրանց ծավալը,
- հստակեցնել կարգավորող պետական մարմնի լիազորությունները ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջների եւ հեռարձակման ժամերի սահմանման վերաբերյալ
- սահմանել տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելք նաեւ տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն տարածելու, կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն պարունակելու դեպքում,
- հայերեն ենթագրերով եւ ժեստերի լեզվի թարգմանությամբ լրացուցիչ եւ պարտադիր հաղորդումների ցանկ սահմանել Հանրային հեռարձակողների համար, ներառելով կրթական, առողջապահական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումները, պաշտոնական տեղեկատվությունը, արտակարգ դրության ժամանակ հատուկ թողարկումները եւ սոցիալական գովազդը,
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքում սահմանել «Ժեստերի լեզու» հասկացությունը:

3.Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր՝ ընդլայնելու հայերեն ժեստերի լեզվով եւ (կամ) ենթագրերով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների ծավալը, լրացուցիչ պարտավորություններ կսահմանվեն Հանրային հեռարձակողների համար, օրենքով կսահմանվի «ժեստերի լեզու» հասկացությունը: